պատասխան 04:12-ին նիստը վարողը նշել է. «Հա, դեկտեմբերի 19-ով ա»:

Այսինքն, մի դեպքում, ըստ հիշատակված արձանագրության ձայնագրության տվյալների՝ ստացվում է, որ քննարկվող հայտը պարունակող ծրարը ներկայացվել է 19.12.2025թ., իսկ մյուս դեպքում, ըստ նշված ծրարի վրա կատարված ձեռագիր նշումի, ինչպես նաև հայտերի գրանցամատյանում առկա նշումի՝ 22.12.2025թ. ժամը 14:29-ին, ինչի պայմաններում Դատարանը նշված ծրարը Պատասխանողին հանձնված լինելու արժանահավատ տվյալ է համարում փոստային ծառայության կայքում՝ ծրարը հանձնված լինելու վերաբերյալ նշված տվյալը՝ այն է 22.12.2025թ. ժամը՝ 17:37, նկատի ունենալով այն, որ ծրարը հանձնելու պատասխանատուն հանդիսանում է փոստային ծառայությունը, ուստի փոստային ծառայությունն է, որ կարող է ճշգրիտ տվյալ ներկայացնել ծրարի հանձման ժամանակահատվածի վերաբերյալ:

Արդյունքում, Դատարանաը հարկ է համարում նշել, որ տվյալ ծրարը հասցեատիրոջն է հանձնվել այն ներկայացնելու ժամկետը սպառված լինեուց հետո, ուստի նշված ծրարով ներկայացված հայտը ենթակա չէր գրանցման գրանցամատյանում և այն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ենթակա էր վերադարձման, այսինքն ենթակա չէր գնահատման:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 113.400 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Ա/Ձ Գոռ Վարդգեսի Խնկոյանի հայցն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի կարիքների համար խոտերի, ծառերի ճյուղերի, ծղոտների, փայտի

տաշեղների, ցորենի թեփի և աղերի ձեռքբերման նպատակով 15.12.2025թ. թիվ 2 որոշմամբ հայտարարված թիվ «ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արլիվաչ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի կարիքների համար խոտերի, ծառերի ճյուղերի, ծղոտների, փայտի տաշեղների, ցորենի թեփի և աղերի ձեռքբերման նպատակով 15.12.2025թ. թիվ 2 որոշմամբ հայտարարված թիվ «ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արլիվաչ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

<<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ից հօգուտ Ա/Ձ Գոռ Վարդգեսի Խնկոյանի բռնագանձել 113.400 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE1E-3DF9-4D2F-BD4B հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: